Թ.

Այստեղ իսկապէս պէտք է վերջանար մեր խօսքը. բայց ձեռքի տակ ունինք մի գործ, որ կարծում ենք Իգնատիոսի հետ պիտի կապել, թէեւ հաստատուն կերպով պնդել չենք կարող թէ նորանն է։

Պատերազմի ընթացքում մեր ձեռքով էջմիածին է բերուած և մատենադարանին յանձնուած Ղարաբաղի Մեծշէն գիւղի նշանաւոր «Կարմիր Աւետարան»ը, որ թըւականով երկրորդ հին ձեռագիրն է Հայոց մէջ, գրուած ՅԾԸ (=909) թուին «ի Կոստանդիանոպոլիս ի ձեռն Թուխթանլի ծառայի ծառային Քի. Տն. Աշոտոյ»։ Բուն աւետարանը իւր մէկ հատիկ մանրանկարով, բնականաբար, այստեղ մեր քննութեան նիւթ լինել կարող չէ, բայց նորան կցուած է 5 թերթ, 10 խորաններով, եւ Մատթէոսի ու Ղուկասի սկզբնաւորութիւնների առաջին թերթերով։

Նորոգութեան այս յաւելումը, թէեւ թուական չունի, բայց ցուցումներ ունինք որոշելու նորա ծագման մօտաւոր ժամանակը. խորաններից մէկի (5ա) գերանների վերայ կանաչ դաշտում դեղին գոյնով գրուած է, «Ոհ Թաթար, վայ աւուրն որ եկիր, անցուցեր զաշխարհս / Ոհ ներեցեր Ած. անչափ արիւնհեղութիւնս»։ Այս խօսքերը կարող են գրուած լինել մօտաւորապէս 1236–1242 թ. թ. կամ քիչ յետոյ, Թաթարների արշաւանքի անմիջական ազդեցութեան տակ՝ նրանց նուաճողական շրջանում. այդ թուականներից յետոյ արդէն հայ իշխանները համակերպուել էին նոր պայմաններին եւ ոչ միայն ենթարկուել Թաթարների իշխանութեան, այլ եւ հաշտութեան պայմանների համաձայն իրենց զօրքերով մասնակից նրանց դէպի Փ. Ասիայի խորերը՝ Երզնկա, Սեբաստիա, Կեսարիա կատարած արշաւանքներին (¹)։

Ժամանակի այսպիսի որոշման միանում է և ուրիշ հանգամանք՝ խորանների նկարչի անունը. Եւսեբիի և Կարպիանոսի թղթակցութեան վերջում, գրուած փոքր երկաթագրով, գրիչն աւելացնում է, 2ա. «Եւ զԻգնատիոս յոքնամեղ գրիչ յաղաւթ(?!) յիշեա ով տր. իմ, եւ դու յիշեալ լիցիս ի տր. ամէն»։ Երկրորդ անգամ նկարիչը յիշում է իւր անունը 6ա. խորանի գերանների վերայ (պատկ. 14). «Ած. ողորմեա ստացողի սորա և մեզ», ներքեւի գերանի վերայ. «Տր. Ած. ողորմեայ Իգնատիոսի։ ամէն», շատ նման Իգնատիոս Հոռոմոսցու խոշոր երկաթագրով գրչութեան։ Եւ վերջապէս երրորդ անգամ իրեն յիշում է 6բ. նկարած խաչի (պատկ. 15) տակ, ներքեւի գերանի վերայ. «Սուրբ նշան ազնեայ մեղաւորիս Իգնատիոսի», ինչպէս Իգնատիոս Հոռոմոսցին Հաւուց թառի աւետարանի խաչի տակ գրել էր «բարեխաւս Իգնատիոսի»։

Սրանց վերայ աւելանում է եւ հետեւեալը. աւետարանիս մէջ ունինք միջին, ուղղանկիւն երկաթագրով այսպիսի մի յիշատակարան. «Արդ ես յամենայնի նուաստ տր. Սարգիս ստացի/այ սբ. աւետարանս անջինջ յիշակ(?!) ինձ եւ/իմ ծնաւղացն որք ընթեռնոյք յիշեցէք ի Քս.»։ Ո՞վ կարող է լինել այս տէր Սարգիսը։ Գրչութիւնից դատելով ժամանակակից է նա Իգնատիոս նորոգող նկարչին, և որովհետև վերև տեսանք, որ նա իւր մեկենասին «տր. իմ» է անուանում, անհաւանական չէ, որ հէնց յիշատակարանի տէր Սարգիսը լինի աւետարանի նորոգել տուողն ու երկրորդ ստացողը։ Արդ, մեր Հոռոմոսցի Իգնատիոսին եւս ժամանակակից է Անիի արքեպիսկոպոսներից Տէր Սարգիս, որի անուան յիշատակութիւնն ունինք ՉԺԱ (=1262) թուին Բագնայրի արձանագրութիւնների մէջ, իսկ Ալիշան մեզ անյայտ աղբիւրների հիման վերայ նորա ժամանակը նշանակում է 1245–1276 թ.։ Այս բոլորը զարթեցնում են մեր մէջ երկու Իգնատիոսների նոյնութեան միտքը։

Բայց նոյնացման մտքի դէմ կայ լուրջ դժուարութիւն եւս, որ երկու արուեստների տարբերութիւնն է։ Սակայն այդ տարբերութիւնը կարող է մասամբ օրինակի ազդեցութեան հետեւանք լինել, որ անպայման հին է, երկրաչափականով արաբական և թռչունների ձեւակերպութեամբ սասանեան յետին աւանդների հետ կապուած, եւ մասամբ, գուցէ, այդ պարզ, գլխաւորապէս կլինեվարիումով գծագրուած,

---

(1) Գանձակեցի՝ Ղուկ. հրատ. 264 | 5 — 269։ Տես եւ մեր Խաղբակեանք եւայլն, եր. 19, ծանօթութիւն։